Հաշվետվություն

2019 թվականի հոկտեմբերի 8-11-ը Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ)՝ ՀԱՊԿ անդամ-պետությունների արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի հերթական 12-րդ նիստին մասնակցություն

1. **Անունը, ազգանունը.**

Ֆելիքս Ցոլակյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ղրղզստանի Հանրապետություն, ք. Բիշքեկ, 2019 թ. հոկտեմբերի 8-11

4. **Հրավիրող կողմը.**

Ղրղզստանի Հանրապետության ԱԻ նախարար, ՀԱՊԿ ԱԻ ՀԽ նախագահ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

ՀԱՊԿ ԱԻ ՀԽ 12-րդ նիստի մասնակցություն

6. **Քննարկված թեմաները.**

Նիստի օրակարգի 4-րդ և 6-րդ հարցերի վերաբերյալ ելույթներ.

4-րդ հարց՝ 2020 թ. ''Arm security-2020" անվտանգության տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսը Երևանում կազմակերպելու մասին:

6-րդ կետը՝ ռուս-հայկական հումանիտար արձագանքման կենտրոնի գործունեության մասին:

7. **Հանդիպումները ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումներ՝ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Վ. Ա. Սեմերիկովի և ՌԴ ԱԻ փոխնախարար Յու. Ֆ. Բարիշևի, Բելառուսի ԱԻ փոխնախարար Ի. Վ. Բոլոտովի, Ղազախստանի ԱԻ փոխնախարար Յու. Վ. Իլյինի հետ:

8. **Հանդիպումների կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հայկական կողմից ներկայացված հարցերն ընդունվեցին ի գիտություն: Ստորագրվեց հանդիպման հարցերի վերաբերյալ արձանագրություն (կցված է), հաստատվեց ՀԱՊԿ ԱԻ ՀԽ 2020 թ. Աշխատանքային պլանը (կցված է), ընտրվեց ՀԱՊԿ ԱԻ ՀԽ նոր նախագահ և քարտուղար՝ ՌԴ ԱԻ նախարար Ե. Ն. Զինիչև՝ նախագահ, ՌԴ ԱԻ միջազգային դեպարտամենտի բաժնի վարիչի տեղակալ Ա. Բ. Ալեքսեև՝ քարտուղար:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ՀԱՊԿ ԱԻ ՀԽ 2020 թ. աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների պատասխանատուներ հաստատվեցին ՀԱՊԿ անդամ-պետությունների ԱԻ նախարարներն ու ՀԱՊԿ քարտուղարությունը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

14.10.2019